Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» ՊՈԱԿ գիտական խորհրդի
2018 թվականի մարտի 5-ի նիստում,
արձանագրություն N 5,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
_____ Կ.Լ.Աթոյան
«05» _____03_____ 2018 թ.

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

ԵՐԵՎԱՆ - 2018

Հեղինակներ՝

տ.գ.թ., դոցենտ Պ. Ա. Քալանթարյան

տ.գ.թ., դոցենտ Կ. Հ. Գրիգորյան

տ.գ.թ., դոցենտ Գ. Ա. Նազարյան

Սույն մեթոդական ցուցումները բակալավրիատում ավարտական աշխատանք կատարելու, ղեկավարելու և պաշտպանելու գործընթացը կազմակերպելու և իրականացնելու ուսումնամեթոդական ուղեցույց է: Այն նախատեսված է համալսարանի բակալավրիատի ուսանողների, պրոֆեսորադասախոսական կազմի, ավարտական աշխատանք գրախոսողների և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

   2.1. Ավարտական աշխատանքի թեմայի ընտրությունը

   2.2. Ավարտական աշխատանքի ղեկավարի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները

   2.3. Ավարտական աշխատանքի կառուցվածքը և շարադրանքը

3. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

   3.1. Ավարտական աշխատանքի պաշտպանությունը

Օգտագործված գրականության ցանկ

Հավելվածներ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Ավարտական աշխատանքի կատարումն ու պաշտպանությունը ուսանողի ձեռք բերած գիտելիքների, հմտությունների և կարողությունների ապացույցն է:

1.2. Ուսանողը ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանության թույլատրվում է տվյալ կրթական ծրագրով մինչև ավարտական աշխատանքի պաշտպանությունը նախատեսված կրեդիտները հավաքելու դեպքում: Մասնագիտության կրթական ծրագիրը չիրականացնելու (նախատեսված կրեդիտները չհավաքելու) դեպքում ուսանողը զրկվում է ավարտական աշխատանքի պաշտպանության իրավունքից: Այդ դեպքում ուսանողին հնարավորություն է տրվում առնվազն մեկ տարի հետո վերականգնվել ավարտական կուրսում և կրկին կատարել ավարտական աշխատանք՝ նոր թեմայով:

1.3. Ավարտական աշխատանքի բովանդակությունը պետք է համապատասխանի տվյալ կրթական ծրագրի վերջնարդյունքներին:

1.4. Ավարտական աշխատանքը պետք է ներկայացվի այն տեսքով, որը հնարավորություն կտա դատելու, թե որքան ամբողջական են արտացոլված և հիմնավորված նրանում զետեղված դրույթները, եզրակացությունները, առաջարկությունները, դրանց կիրառական նշանակությունը: Ավարտական աշխատանքը այլ գիտական աշխատանքներից տարբերվում է նրանով, որ ունի որակավորման գործառույթ և պաշտպանությունից դրական գնահատական ստացած ուսանողին տրվում է բակալավրի որակավորման աստիճան:

1.5. Ավարտական աշխատանքն ինքնուրույն աշխատանք է: Առանց հեղինակին հղում կատարելու ուրիշի արտահայտած գաղափարը և կատարած հետազոտության արդյունքները որպես սեփական աշխատանքի արդյունք ներկայացնելը գրագողություն է: Այդ ակադեմիական կարգապահական նորմի պահպանումը պարտադիր է: Գրագողության նկատմամբ վերահսկողության կառուցակարգը սահմանվում է առանձին կարգով:

2. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

2.1. Ավարտական աշխատանքի թեմայի ընտրությունը

2.1.1. Ավարտական աշխատանքների թեմաները առաջադրում են տվյալ կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնի կամ ամբիոնների դասախոսները, դրանց վերջնական ցանկը հաստատվում է ամբիոնի նիստում կամ ամբիոնների համատեղ նիստում, եթե տվյալ կրթական ծրագիրն իրականացնում են մեկից

ավելի ամբիոններ: Ավարտական աշխատանքի թեմայի անվանումը պետք է արտացոլի այն գլխավոր գաղափարը, որի վրա շեշտադրում է կատարվելու աշխատանքում: Ուսանողը կարող է առաջարկել ավարտական աշխատանքի թեմա՝ դրա նպատակահարմարության հիմնավորմամբ, ինչը քննարկվում և հաստատվում է ամբիոնի նիստում:

2.1.2. Ամբիոնն ավարտական աշխատանքների թեմաների ցանկն ուսանողներին առաջարկում է բակալավրիատի ավարտական ուսումնական տարվա առաջին կիսամյակի առաջին ամսվա ընթացքում: Առաջարկվող թեմաների քանակը առնվազն 20 տոկոսով պետք է գերազանցի ավարտական աշխատանք կատարողների թվին և չկրկնի նախորդ երեք տարվա թեմաները:

2.1.3. Ավարտական աշխատանքի թեմայի ընտրության համար ուսանողն ավարտական ուսումնական տարվա երկրորդ ամսվա ընթացքում գրավոր դիմում է ամբիոնի վարիչին (տե՛ս հավելված 1):

2.1.4. Ուսանողների ընտրած և ղեկավարներ նշանակված թեմաների ցանկը նախ հաստատվում է տվյալ ամբիոնի, այնուհետև՝ ֆակուլտետի խորհրդի նիստերում՝ մինչև տվյալ տարվա նոյեմբերի 1-ը:

2.1.5. Հաստատված ցուցակների մեկական օրինակ պահվում է ամբիոնում, դեկանատում և ուսումնական բաժնում:

2.1.6. Ղեկավարի կամ ավարտական աշխատանքի թեմայի փոփոխություն թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում (օրինակ՝ ղեկավարի երկարատև գործուղում, ուսումնական տարվա ընթացքում աշխատանքից ազատում, երկարատև հիվանդություն, իսկ թեմայի փոփոխություն՝ համապատասխան հիմնավորվածության առկայության դեպքում:)

2.1.7. Ավարտական աշխատանքը կատարվում է հետևյալ հիմնական փուլերով՝

- ավարտական աշխատանքի թեմայի ընտրություն և հաստատում,
- աշխատանքների կատարման ժամանակացույցի կազմում,
- աշխատանքի թեմային առնչվող գրականության ընտրություն և ուսումնասիրություն,
- հաշվարկների համար վիճակագրական նյութերի և այլ տվյալների հավաքագրում, աղյուսակների, գծապատկերների և գծանկարների կառուցում,
- ավարտական աշխատանքի ձևավորում (էջերի, գլուխների, աղյուսակների, գծանկարների, գծապատկերների համարակալում, տեքստի տպագրություն և տպագրված ավարտական աշխատանքի կազմում),
- ավարտական աշխատանքի նախնական պաշտպանություն՝ ամբիոնի հայեցողությամբ,
- ավարտական աշխատանքի ներկայացում ամբիոն՝ ղեկավարի կարծիքի հետ,
- ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանություն:

2.1.8. Ավարտական աշխատանքի կատարման հիմնական փուլերի ժամկետներն են՝

- ավարտական աշխատանքի թեմայի ընտրությունն իրականացվում է պաշտպանության ժամանակացույցից առնվազն 6 ամիս առաջ,
- ղեկավարը հաստատում է ուսանողի և ղեկավարի համատեղ աշխատանքի կարգն ու ժամանակացույցը, ինչպես աշխատանքի առանձին մասերը, այնպես էլ ավարտուն աշխատանքը ներկայացնելու ժամկետները՝ թեմայի ընտրությունից հետո առավելագույնը մեկ ամսվա ընթացքում,
- ավարտական աշխատանքի նախնական պաշտպանություն ամբիոնի հայեցողությամբ՝ հրապարակային պաշտպանությունից առաջ,
- ղեկավարի կարծիքի հետ ավարտական աշխատանքի ներկայացում ամբիոն՝ պաշտպանության օրվանից առնվազն 10 աշխատանքային օր առաջ,
- գրախոսության ներկայացում ամբիոն՝ պաշտպանության օրվանից առնվազն 5 օր առաջ:

2.2. Ավարտական աշխատանքի ղեկավարի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները

2.2.1. Ամբիոնը նշանակում է ավարտական աշխատանքի ղեկավար՝ ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմից:

2.2.2. Ավարտական աշխատանքի ղեկավար նշանակվում են, որպես կանոն, ամբիոնի պրոֆեսորները, դոցենտները (ոչ ավելի, քան 10 ավարտական աշխատանք և մագիստրոսական թեզ, եթե առկա է նաև թեզի ղեկավարություն), գիտական աստիճան ունեցող ասիստենտները (ոչ ավելի, քան 8 ավարտական աշխատանք և մագիստրոսական թեզ), ինչպես նաև առնվազն հինգ տարվա գիտամանկավարժական ստաժ ունեցող, գիտական աստիճան չունեցող ասիստենտները՝ հաշվի առնելով նրանց մասնագիտական կարողությունները և հետազոտությունների շրջանակը (ոչ ավելի, քան 5 ավարտական աշխատանք): Անհրաժեշտության դեպքում ղեկավար կարող են նշանակվել նաև տվյալ բուհի մասնագիտական այլ ամբիոնների դասախոսներ, այլ բուհերի կամ կազմակերպությունների համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ:

2.2.3. Ավարտական աշխատանքի պատրաստման ընթացքում ղեկավարը պարտավոր է ուսանողի հետ իրականացնել հետևյալ աշխատանքները՝
- ծանոթացնել ավարտական աշխատանք կատարելու մեթոդաբանությանը և պահանջներին,
- ավարտական աշխատանքի թեմայի շրջանակներում ուսանողին ուղղորդել անհրաժեշտ մասնագիտական գրականության և տվյալների աղբյուրների ընտրության հարցերում,

- վերահսկել նրա կատարած աշխատանքները, անցկացնել մշակված ժամանակացույցով նախատեսված պարբերական խորհրդատվություններ,
- գնահատել կատարված աշխատանքի համապատասխանությունը ներկայացվող պահանջներին,
- գրավոր կարծիք տալ ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանության երաշխավորելու վերաբերյալ,
- խորհրդատվություն տրամադրել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում ելույթը նախապատրաստելու համար:

2.2.4. Ուսանողի և իր կատարած աշխատանքների ընթացքի, այդ թվում՝ ժամանակացույցի պահպանման վերաբերյալ ղեկավարը պարբերաբար տեղեկատվություն է ներկայացնում ամբիոնի նիստերում:

2.2.5. Ղեկավարը ներկայացնում է գրավոր կարծիք (2-3 էջ), որտեղ նշվում է կատարված աշխատանքի համապատասխանությունը տվյալ կրթական ծրագրի վերջնարդյունքներին: Այնուհետև ղեկավարը հակիրճ ներկայացնում է կատարված աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը, դրա արդիականությունը, տեսական մակարդակն ու գործնական կարևորությունը, առաջադրված խնդիրների լուծման խորությունն ու յուրահատկությունը, կատարված աշխատանքի ինքնուրույնության աստիճանը, գրականության օգտագործման աստիճանը և դրանց հիման վրա եզրակացնում է՝ աշխատանքը պատրաստ է հրապարակային պաշտպանության կամ պատրաստ չէ:

2.2.6. Ավարտական աշխատանքի վերաբերյալ ղեկավարի բացասական կարծիքի դեպքում ուսանողի աշխատանքը չի թույլատրվում հրապարակային պաշտպանության:

2.2.7. Ղեկավարը պատասխանատվություն է կրում սույն մեթոդական ցուցումների պահանջներին համապատասխան ավարտական աշխատանք ներկայացնելու համար՝ հակառակ դեպքում նա կարող է զրկվել հետագայում ավարտական աշխատանքներ ղեկավարելու իրավունքից:

2.3. Ավարտական աշխատանքի կառուցվածքը և շարադրանքը

2.3.1. Ավարտական աշխատանքը պետք է ունենա տեսական, վերլուծական և գործնական բաղադրիչներ: Այն պետք է ունենա առաջադրված նպատակներին և խնդիրներին համապատասխան կառուցվածք:

2.3.2. Ավարտական աշխատանքը շարադրվում է տպագիր, A4 (210x297 մմ) չափի թղթի մի կողմի վրա, համակարգչով (Microsoft Word ծրագրով), որի ծավալը կարող է տատանվել 50-60 էջի սահմաններում՝ առանց հավելվածների, իսկ տեսական բնույթի թեմաների դեպքում ծավալը կարող է հասնել մինչև 70 էջի, տառատեսակը՝ Unicode, օտարալեզու շարադրանքը՝ Times New Roman, տառաչափը՝ 12, տողերի միջակայքը՝ 1,5, էջի աջ կողմից՝ 10 մմ լուսանցք, ձախից՝

30 մմ, վերևից՝ 20 մմ, ներքևից՝ 25 մմ, էջում՝ 28-32 տող: Էջերի համարակալումը էջի ներքևում՝ աջից: Տիտղոսաթերթը չի համարակալվում: Աշխատանքին վերաբերող ծանոթագրությունները տեղադրվում են էջի ստորին մասում:

2.3.3. Աշխատանքում մեջբերումներն ու հղումները նշվում են տողատակին (հեղինակի ազգանունը, անվան առաջին տառը, աշխատության անվանումը, հրատարակչությունը, հրատարակության վայրը, տարեթիվը և էջը)՝ միջանցիկ համարակալմամբ: Էլեկտրոնային նյութերից մեջբերումներ կատարելիս նշվում են ոչ միայն տվյալ կայքի հասցեն, այլ նաև տվյալ կայքի այն որոշակի էջը, որից կատարվել է մեջբերումը կամ հղումը: Յուրաքանչյուր գլխի շարադրանքը սկսվում է նոր էջից: Գլուխների անվանումները պետք է լինեն մեծատառերով: Աղյուսակների տեղաբաշխումը կախված է դրանց ծավալից: Հեղինակի կազմած աղյուսակները տեղադրվում են տեքստում, իսկ այլ աղբյուրներից բերված, մեկ էջից ավելի ծավալ ունեցող աղյուսակները՝ հավելվածում: Յուրաքանչյուր աղյուսակ պետք է ունենա անվանում (գրվում է աղյուսակի վերևում), չափի միավոր և համարակալում: Աղյուսակները կարելի է տեղադրել ուղղաձիգ կամ հորիզոնական դիրքով: Աղյուսակի սյունակներում ազատ տեղեր չպետք է մնան, պետք է դնել գծիկ կամ գրել «չկա» («չի որոշված»):

2.3.4. Գծապատկերներն ու գծանկարները ներկայացվում են ինքնուրույն համարակալմամբ, որոնցից յուրաքանչյուրն ունենում է անվանում (գրվում է գծապատկերի և գծանկարի ներքևում):

2.3.5. Ըստ հերթականության՝ ավարտական աշխատանքի կառուցվածքի հիմնական տարրերն են՝

- տիտղոսաթերթ,
- բովանդակություն,
- ներածություն,
- հիմնական գլուխներ,
- եզրակացություններ և առաջարկություններ,
- օգտագործված գրականության ցանկ,
- հավելվածներ:

2.3.6. Սահմանված կարգով լրացված տիտղոսաթերթը աշխատանքի առաջին էջն է (տե՛ս հավելված 2):

2.3.7. Հրապարակային պաշտպանության ներկայացվող աշխատանքը հաստատվում է ուսանողի, ղեկավարի և ամբիոնի վարիչի ստորագրություններով:

2.3.8. Տիտղոսաթերթին հաջորդում է բովանդակությունը, որտեղ արտացոլվում են աշխատանքի բոլոր բաժինները, այդ թվում՝ գրականության ցանկը և հավելվածները: Բովանդակությունում նշվում են բաժինների սկսվող էջերը: Բովանդակության վերնագրերը նույնությամբ կրկնում են տեքստի վերնագրերը:

2.3.9. Աշխատանքի բովանդակությունը կազմելուց հետո ուսանողը հստակեցնում է կատարվելիք աշխատանքների տրամաբանական հաջորդականությունը:

2.3.10. Ներածությունում հիմնավորվում են ընտրված թեմայի արդիականությունը, դրա տեսական և գործնական կարևորությունը, ձևակերպվում են աշխատանքի նպատակները և խնդիրները, նշվում են ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, ուսումնասիրության ստացված արդյունքների տեսական ու գործնական նշանակությունը և աշխատանքի կառուցվածքը: Ներածությունում տրվում է նաև տեղեկատվության ստացման հիմնական աղբյուրների բնութագիրը: Ուսումնասիրության տեսամեթոդաբանական աղբյուրներ են համարվում օրենսդրահիրավական ակտերը, ուսումնական և գիտահետազոտական մասնագիտական գրականությունը, վիճակագրական նյութերը, տարբեր կազմակերպությունների հաշվետվությունները, սեփական ուսումնասիրությունները, սոցիոլոգիական հարցումները, տեղեկատվության էլեկտրոնային աղբյուրները և այլն:

2.3.11. Աշխատանքի գլուխների վերնագրերը պետք է համապատասխանեն թեմային և լիովին բացահայտեն առաջադրված խնդիրները:

2.3.12. Յուրաքանչյուր գլուխ պետք է պարունակի առնվազն 2 պարագրաֆ, որոնք համարկալվում են 1.1., 1.2., ... կամ 2.1., 2.2., ...և այլն:

2.3.13. Գլուխներից առաջինը պետք է ունենա տեսական բնույթ, իսկ մյուսները՝ վերլուծական և կիրառական:

2.3.14. Առաջին գլխում սովորաբար քննարկվում են թեմայի էությունը բացահայտող տեսական բնույթի հարցերը:

2.3.15. Երկրորդ գլխում, որպես կանոն, վերլուծվում է հավաքված տեղեկատվությունը՝ ներառյալ վիճակագրական տվյալները, փաստերն ու իրադարձությունները:

2.3.16. Երրորդ գլխում առաջարկվում են բացահայտված հիմնախնդիրների լուծման ուղիները, նշվում են դրանց զարգացման այլընտրանքային տարբերակներն ու հնարավորությունները:

2.3.17. Աշխատանքի շարադրանքում ցանկալի է ներկայացնել աղյուսակներ, գծապատկերներ և գծանկարներ: Քանակական ցուցանիշների վերլուծությունը պետք է իրականացվի տնտեսամաթեմատիկական և վիճակագրական գործիքակազմի, սոցիոլոգիական հարցման մեթոդների օգնությամբ:

2.3.18. Աշխատանքն ավարտվում է «Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնով: Այն ոչ թե ուսումնասիրությունից ստացված արդյունքների ուղղակի մեջբերում է, այլ դրանց սինթեզված ամփոփումը, որը կատարված աշխատանքի ընդհանրացված գնահատականն է:

2.3.19. Դրանից հետո ներկայացվում է օգտագործված գրականության ցանկը, որի առնվազն 70 տոկոսը պետք է արտացոլված լինի աշխատանքում: Գրականության ցանկում սկզբից ներկայացվում են իրավական ակտերը,

այնուհետև հայերեն գրականությունը՝ ըստ հեղինակների ազգանվան այբբենական հերթականության, օտարալեզու գրականությունը՝ նույն տրամաբանությամբ, և վերջում համացանցային կայքերը: Աղբյուրները բերվում են բնօրինակի լեզվով: Նույն հեղինակի աշխատանքները հարկավոր է դասավորել ըստ տարեթվերի աճման կարգի կամ ըստ շարադրանքի մեջ հղումների հերթականության: Անհրաժեշտ է գրել աշխատանքի լրիվ անվանումը, դնել բաժանիչ՝ // նշանը, հրատարակչությունը, հրատարակման տեղը, տարեթիվը, էջերի ընդհանուր թիվը:

2.3.20. Աշխատանքը ծանրաբեռնող լրացուցիչ նյութերը ներկայացվում են հավելվածներում: Հավելվածները վերնագրվում և համարակալվում են՝ առանց էջակալման:

3. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Ավարտական աշխատանքի նախնական պաշտպանությունը կազմակերպում է ամբիոնը՝ իր հայեցողությամբ, ոչ պարտադիր:

3.2. Ավարտական աշխատանքի նախնական պաշտպանության նպատակը հրապարակային պաշտպանությանը ուսանողներին նախապատրաստելն է:

3.3. Ավարտական աշխատանքի նախնական պաշտպանության ժամանակ աշխատանքի բովանդակությունը ներկայացնելու համար յուրաքանչյուր ուսանողի տրվում է մինչև 15 րոպե ժամանակ:

3.4. Նախնական պաշտպանության ժամանակ ղեկավարը ստուգում է ավարտական աշխատանքի վերաբերյալ ելույթի կառուցվածքն ու բովանդակությունը, ելույթի համապատասխանությունը ավարտական աշխատանքի բովանդակությանը, ներկայացման եղանակը, որակը և ժամանակի կառավարումը:

3.5. Նախնական պաշտպանությունը գնահատվում է ըստ պատրաստվածության մակարդակի ընդհանուր բնութագրի և գիտելիքների որակի:

3.6. Ավարտական աշխատանքը պատրաստ չլինելու դեպքում բացահայտված թերությունները վերացնելու համար ուսանողին տրվում է ժամանակ՝ չխախտելով 2.1.8-րդ կետով սահմանված պաշտպանության գործընթացի ժամկետները:

3.7. Ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանությունը կազմակերպում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը՝ ըստ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի ձևավորման և աշխատանքի ընթացակարգի»:

3.8. Ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանության ժամանակ աշխատանքի բովանդակությունը ներկայացնելու համար յուրաքանչյուր ուսանողի տրվում է մինչև 15 րոպե ժամանակ:

3.9. Ուսանողին հանձնաժողովի անդամների կողմից հարցեր տրվում են ելույթից հետո՝ մինչև 15 րոպե:

3.10. Հանձնաժողովի հարցերին պատասխանելուց հետո ընթերցվում է ավարտական աշխատանքի գրախոսի գրախոսությունը:

3.11. Ավարտական աշխատանքի պաշտպանության արդյունքները գնահատվում են «գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար» գնահատականներով՝ ըստ համալսարանում ընդունված գնահատման սանդղակի: Գնահատականները հայտարարվում են նույն օրը՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստի արձանագրությունը կազմելուց հետո՝ մեկ ժամվա ընթացքում:

3.12. Դրական գնահատված ավարտական աշխատանքները պաշտպանության օրվանից հետո 3 տարի ժամկետով պահպանվում են համալսարանի արխիվում:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Կրթության մասին» ՀՀ օրենքը, ՀՕ-297, ՀՀՊՏ 1999.05.14/12(78):
2. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, ՀՕ-62-Ն, ՀՀՊՏ 2005.01.31/8(380):
3. ՀՀ կրթության և գիտության նախարարի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգը հաստատելու մասին» 2011 թվականի հոկտեմբերի 31-ի N 1197-Ն հրաման (պետական գրանցում 01.12.2011 կոդ՝ 11011506):
4. ՀՀ կրթության և գիտության նախարարի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգը հաստատելու մասին» 2011 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 1242-Ն հրաման (պետական գրանցում 27.12.2011 կոդ՝ 11011570)
5. ՀՊՏՀ մագիստրատուրայում կրեդիտային հենքով ուսուցման կազմակերպման կարգ:
6. Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգ:
7. Գրիգորյան Կ. Հ., «Մագիստրոսական ատենախոսության կատարման և պաշտպանության կազմակերպման մեթոդական ցուցումներ», ուսումնամեթոդական ուղեցույց, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, Երևան, «Տնտեսագետ», 2011, էջ 1-32:
8. Дондокова Е.Б., Цыбенов Б.Д., Дипломная работа. Методика написания и правила оформления. Улан-Удэ: Изд-во ВСГТУ, 2004, 30 с.
9. Кузин Ф.А., Магистерская диссертация. Методика написания, правила оформлении и процедура защиты. Практическое пособие для студентов-магистрантов. 2-е изд., перераб. и доп., М., "Ось-89", 1999, 304 с.
10. http://www.wikihow.com/Write-a-Master's-Thesis
11. http://www.gwr.arizona.edu/writingproposal1.htm
12. http://ifsh.de/pdf/studium/Thesis-Guide.pdf
13. http://www.sml.hw.ac.uk/postgraduate/downloads/dissertations/dissertationguide.pdf
14. http://www.utexas.edu/ogs/pdn/pdf/format_guidelines-m.pdf

Հավելված 1

Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարանի _____
ամբիոնի վարիչ պարոն (տիկին) _____
_____ մասնագիտության
_____ կրթական ծրագրի
առկա (հեռակա) ուսուցման
չորրորդ (հինգերորդ) կուրսի ուսանող (ուհի)
_____
Հեռ. _____
Էլեկտրոնային հասցեն՝ _____

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ հաստատել ավարտական աշխատանքի թեման հետևյալ վերնագրով՝ «_____»:

Դիմող՝ (անուն, ազգանուն, հայրանուն)
(ստորագրություն)

_____ _____ 20 _____ թ.

Հավելված 2

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝

Ֆակուլտետ՝

Ամբիոն՝

Մասնագիտությունը՝

Կրթական ծրագիրը՝

Ամբիոնի վարիչ՝

Ղեկավար՝

Երաշխավորվում է պաշտպանության՝

Կատարող՝

Երևան – 20 ____

Հավելված 3

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի

«_____» մասնագիտության «_____»

կրթական ծրագրի առկա (հեռակա) ուսուցման բակալավրիատի 4-րդ (5-րդ) կուրսի ավարտական աշխատանքների պաշտպանության ամփոփիչ հանձնաժողովի գնահատման թերթիկ

N	Ուսանողի ազգանունը, անունը, հայրանունը	Ավարտական աշխատանքի թեմայի վերնագիրը	Գնահատման գործոնների կշիռը* (միավոր)			
			I	II	III	IV

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ՝

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամ՝

* Ծանոթություն:

I. աշխատանքի բովանդակությունը, 15 %

II. աշխատանքի ինքնուրույնության աստիճանը, 15 %

III. աշխատանքի ներկայացման որակը, 35 %

IV. տրված հարցերի և դիտողությունների պատասխանների ամբողջականությունը և խորությունը, 35 %